ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախագծային-հետազոտական աշխատանքները հասարակագիտության ուսուցման արդյունավետ միջոց

Առարկա՝ Հասարակագիտություն

Մարզ՝ Վայոց ձոր

Դպրոց՝Զառիթափի միջն. դպրոց

Հեղինակ՝ Հեղինե Արշավիրյան

Աշխատանքի ղեկավար՝ Ռուզաննա Կարապետյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2

1. Ինչ է նախագծային աշխատանքը 4

2. Ուսուցիչը և աշակերտը նախագծային աշխատանքում 5

3. Նախագծային աշխատանքը և հանրակրթության պետական չափորոշիչը 7

4. 21-րդ դարի սովորողների հմտությունների ձևավորումը նախագծային աշխատանքում 8

5. Նախագծային աշխատանքը և հասարակագիտության առարկայի առանձնահատուկությունները 12

6. Հետազոտության արդյունքների վերլուծություն 14

Եզրակացություն 15

Օգտագործված գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մարդկությունն ապրում է բոլորովին նոր ժամանակներում, որտեղ զարգացումներն ընթանում են աննախադեպ բուռն և արագ տեմպերով: Մարդկային քաղաքակրթության զարգացման այս փուլին հատուկ են գլոբալացումը, տեղեկատվական-հաղորդակցական և բարձր տեխնոլոգիաների զարգացումը և մարդկանց առօրյայում դրանց դերի ու կիրառության աննախադեպ աճը: Եվ միանգամայն հասկանալի է, որ նման զարգացումները հանգեցնում են նոր ձեռքբերումների, նոր բացահայտումների ու նվաճումների, նոր առաջընթացի: Սակայն դրանք ի հայտ են բերում մարդկության համար նոր խնդիրներ ու մարտահրավերներ:

Ժամանակակից ինֆորմացիոն հասարակության մեջ պահանջվում է նոր մարդ, որը ոչ միայն զինված է գիտելիքներով, այլև նորովի է վերաբերվում ուսման պրոցեսին, իր ունեցած գիտելիքներին, ինչպես նաև կարողանում է դրանք կիրառել իր առջև դրված պրոբլեմները լուծելիս: Այս ամենը նոր մարտահրավերներ է նետում նաև ժամանակակից կրթական համակարգին: Այդ համատեքստում փորձ է արվում ներկայացնել հասարակագիտական գիտելիքների և կարողությունների ձեռք բերման առանձնահատուկությունները:

Հետազոտության նպատակն է բացահայտել հասարակագիտության ժամերին նախագծային աշխատանքի իրականացման նպատակահարմարությունն, արդյունավետությունն ու առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են.

1.Խորապես ուսումնասիրել նախագծային աշխատանքի բովանդակությունն ու նպատակները:

2.Համեմատել հասարակագիտության առարկայական չափորոշիչը և հետազոտական-նախագծային աշխատանքին ներկայացվող պահանջները:

3.Նախկինում հասարակագիտության ժամերին անցկացված նախագծային աշխատանքների սեփական փորձի արդյունավետության և այլ ուսուցիչների փորձի համեմատություն և վերլուծություն:

Հետազոտության օբյեկտը հասարակագիտության ժամերին նախագծային աշխատանքի անցկացումն է:

Հետազոտության առարկան նախագծային աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

Հետազոտության վարկածը ենթադրվում է, որ հասարակագիտության ժամերին նախագծային աշխատանքի անցկացման լայն հնարավորություններ և մեծ արդյունավետություն կա:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1.Նախագծային աշխատանքի իրականացումը դասապրոցեսում հնարավորություն է տալիս ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայել կարողացող մարդու ուսուցմանը և դաստիարակությանը:

2.Հասարակագիտության առարկայի չափորոշիչներն ու ուսումնական գործունեության տարբեր տեսակները հնարավորություն են տալիս արդյունավետորեն իրականացնելու նախագծային աշխատանքներ դասապրոցեսում։

3.Նախագծային աշխատանքում մեծանում է ուսուցչի դերն ու պատասխանատվությունը։

4.Նախագծային աշխատանքում մեծանում է աշակերտի ինքնուրույնությունը, ստեղծագործականությունը և ակտիվությունը։

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, վեց գլուխներից, եզրակացությունից, օգտագործվող գրականության ցանկից:

1. ԻՆՉ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ասա՛ ինձ, և ես կմոռանամ

Ցույց տու՛ր ինձ, և ես կհիշեմ

Ներգրավի՛ր ինձ, և ես կսովորեմ

Նախագծային աշխատանքը որևէ տեսական կամ պրակտիկ խնդրի լուծման դեպքում, խնդրի մանրամասն մշակման միջոցով նախաես դրված նպատակին հասնելու մեթոդ է, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով: Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Ժամանակակից հասկացմամբ այս մեթոդը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «Ես գիտեմ, թե ինչի են պետք իմ գիտելիքները և ես գիտեմ որտեղ և ինչպես կիրառել դրանք»:

Գոյություն ունեն նախագծային աշխատանքի տարբեր տիպեր: Նախագծային աշխատանքը ըստ գործունեության տիպի լինում է.

1.Գործնական-կողմնորոշիչ նախագիծ (օրինակ՝ Ուսումնաօժանդակ նյութի ստեղծում)

2.Հետազոտոկան նախագիծ

3.Տեղեկատվական նախագիծ (օրինակ՝ Ստեղծել «Անվանի հայ մաթեմատիկոսներ» ինտերնետային էջ)

4.Ստեղծագործական նախագիծ (օրինակ՝ ոչ ավանդական մոտեցում նախագծային արդյունքի ստեղծման գործում)

5.Դերային նախագիծ (օրինակ՝ թատերական ներկայացում)

6.Պրակտիկ կողմնորոշիչ

7.Ճանաչողական –կողմնորոշիչ

Ըստ առարկաների ընդգրկվածության լինում են մոնոնախագծեր և միջառարկայական նախագծեր: Ըստ կապերի բնույթի լինում է միջդասարանական, միջդպրոցական և արտաքին: Ըստ նախագծի մասնակիցների թվի լինում է անհատական, զույգերով և խմբային: Ըստ տևողության լինում է կարճաժամկետ, երկարաժամկետ և միջին:

2. ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԸ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային , ստեղծագործական մեթոդների համադրություն է: Այստեղ **ուսուցիչը** ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Ուսուցչի հիմնական խնդիրն է պատրաստել և կյանք ուղարկել մի մարդու, որը կարողանում է գտնել և յուրացնել իրեն անհրաժեշտ ինֆորմացիան: Քանի որ ցանկացած կարողություն ոչ մայն ենթադրում է գիտելիքի առկայություն, այլև դրանց օգտագործում: Այսպիսի խնդիրը մեծ հայողությամբ կարող է լուծվել հասարակագիտության ժամերին՝ նախագծային աշխատանքի միջոցով: Այստեղ ուսուցիչը իր առջև դնում է հետևյալ խնդիրները.

1.Ճանաչողական կարողությունների և հմտությունների զարգացում

2.Ինֆորմացիոն տարածությոն մեջ կողմնորոշվելու հմտության ձևավորում

3.Սովորողների մտահորիզոնի ընդլայնում

4.Ուսումնական պրոցեսի ակտիվացում, որը կբարձրացնի նախագծային աշխատանքի կատարման արդյունավետությունը:

Այս խնդիրների իրականացման համար նախագծային աշխատանք իրականացնող ուսուցիչը պետք է ունենա հետևյալ հմտություններն ու կարողությունները.

1.Նա պետք է տիրապետի հետազոտական, որոնողական մեթոդների, կարողանա կազմակերպել աշակերտների հետազոտական աշխատանքը

2.Կարողանա կազմակերպել և անցկացնել քննարկումներ

3.Ուղղորդի սովորողներին դեպի պրոբլեմի լուծում

4.Աշակերտներին չթելադրի իր տեսակետն

Նախագծային աշխատանքոում, ուսուցիչը պատրաստի գիտելիքների կրողից, վերածվում է աշակերտների հետազոտական-ճանաչողական աշխատանքի կազմակերպողի, նրանց ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնման համար պայմաններ ստեղծողի: Այս դեպքում ուսուցիչը դառնում է ոչ թե առարկայի տերը, այլև լայն պրոֆիլի մանկավարժ: Նրա ստեղծագործական , ոչ ստանդարտ մոտեցումը մեծացնում է աշակերտների մոտիվացիան, փոխվում է դասի հոգեբանական մթնոլորտը : Ինֆորմացիայի հեղինակային աղբյուրից ուսուցիչը վերածվում է հետազոտողի, ստեղծագործական պրոցեսի մասնակցի, սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպչի: Նա էնտուզիաստ է, մասնագետ է, խորհրդատու է, ղեկավար, հարց տվող, կոորդինատոր և փորձագետ: Նրա ճիշտ և գրագետ աշխատանքը .

1.Նպաստում է սովորողների անձնական ինքնավստահության բարձրացմանը

2.Բարձրացնում է «համայնքի ոգին», զարգացնում է շփվողականությունը, միմյանց հետ համագործակցումը:

3. Զարգացնում է քննադատական մտածողությունը, պրոբլեմի լուծման ուղիների որոնման կարողությունը:

4. Զարգացնում է սովորողների ստեղծագործական կարողությունները:

Նախագծային խնդիրների կատարման ընթացքում **սովորողները** ներգրավված են ակտիվ ճանաչողական-ստեղծագործական պրոցեսի մեջ: Այդ ընթացքում նրանք ստանում են նոր գիտելիքներ և ամրապնդում են այդ առարկայից կամ առարկաներից ստացած գիտելիքները, որի շրջանակներում իրականացնում են նախագծային աշխատանքը: Նրանք նաև լուծում են պրակտիկ, հետազոտական խնդիրներ: Սովորողներին դուր է գալիս զբաղվել պրակտիկ գործունեությամբ, որովհետև.

1.Յուրաքանչյուրը կարող է իրեն դրսրորել որպես ստեղծագործող անձնավորություն

2.Յուրաքանչյուրը ընդգրկված է մի աշխատանքում, որը իր սրտով է

3.Գիտելիքներ են ավելանում

4.Զարգանում է ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունը, կամքը, ինքնարտահայտման կարողությունը

5.Դաստիրակվում է նպատակասլացություն, նախաձեռնողականություն, կոլեկտիվիզմի զգացում, պատասխանատվություն և հանդուրժողականություն:

Առավել դժվար է այն հարցը, թե ինչ չափով են աշակերտները ինքնուրույն այդ նախագծում: Դա կախված է սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններից, նրանց նախկին փորձից, նախագծի թեմայի բարդությունից, և խմբի անդամների միջև հարաբերություններից:

3. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

Նախագծային աշխատանքին ներկայացվող պայմաններից մեկն այն է , որ այն պետք է ներառվի ուսուցման և դաստիարակության ծրագրում և հենվի հանրակրթության չափորոշիչների վրա, նպաստի հանրակրթության պետական չափորոշիչով ձևակերպված և առաջ քաշված մի շարք առանցքային մոտեցումների ու գաղափարների իրականացմանը:

Ինչպես գիտենք, Հանրակրթության պետական նոր չափորոշիչն առաջնորդվում է կարողունակությունների վրա հիմնված կրթության գաղափարով: Այն սահմանում է միջնակարգ կրթության կարողունակությունները և ձևակերպում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները յուրաքանչյուր կրթական աստիճանի համար:

Կարողունակությունները սովորողի՝ ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերած գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետորեն ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Դրանք ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի՝ ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Ներկայացված են սովորողների կրթության և դաստիարակության համար խիստ կարևոր և բազմազան կարողունակություններ, որոնք տրամաբանական կապի և հարաբերակցության մեջ են միմյանց հետ: Ուսումնական նախագծային աշխատանքը կարող է լինել նշված կարողունակությունների ձևավորման, դրսևորման ու դրանց գնահատման ընդհանրական մեթոդ:

1.Լեզվական գրագիտություն և կարողունակություն
2.Սովորել սովորելու կարողունակություն
3.Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4.Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5.Թվային և մեդիա կարողունակություն
6.Գիտատեխնիկական կարողունակություն
7.Մշակութային կարողունակություն
8.Տնտեսական կարողունակություն

4. 21-ՐԴ ԴԱՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Վերը նշված միջնակարգ կրթության կարողունակությունները մշակվել են՝ հիմքում ունենալով 21-րդ դարի սովորողների հմտությունները : Հետևաբար ուսումնական նախագծային աշխատանքների կազմակերպումն ու խրախուսումը նպաստում են նաև 21-րդ դարի սովորողների հմտությունների ձևավորմանը:

21-րդ դարի սովորողների հմտությունները ներկայացված են երեք խոշոր խմբերով.

ուսումնառության հմտություններ՝ քննադատական մտածողություն, ստեղծարարություն, համագործակցություն, հաղորդակցություն,

գրագիտության հմտություններ՝ մեդիագրագիտություն, տեղեկատվական գրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն,
կյանքի հմտություններ՝ ճկունություն, առաջնորդություն, նախաձեռնողականություն, արդյունավետություն, սոցիալական հմտություններ:
Ուսումնական նախագծային աշխատանքն ունի իրականացման քայլերի որոշակի տրամաբանություն, յուրաքանչյուր փուլում իրականացվում են որոշակի խումբ հմտություններ
1.Նախագծի թեմայի ընտրություն
2.Հիմնահարցի ձևակերպում
Երբ սովորողներն արդեն ընտրության արդյունքում ունեն մեկ հիմնախնդիր նշանակում է՝ նախագծային հետազոտական աշխատանքի առաջին քայլերն արդեն արված են: Այս քայլերն առավելապես նպաստում են 21-րդ դարի հետևյալ հմտությունների ձևավորմանը՝ **հաղորդակցություն, քննադատական մտածողություն, ճկունության ձևավորում:**
Հաղորդակցությունն անձի այն հատկությունն է, որով նա բնականոն փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ, համարժեքորեն ձևակերպում իր ասելիքը, տեղեկություններ հաղորդում և ընդունում՝ ճշտորեն վերծանելով դրանք, ապահովելով պատշաճ հետադարձ կապ:
Քննադատական մտածողությունը հնարավորություն է տալիս քննելու և գտնելու կենսական կարևոր խնդիրների լուծումները: Դա այն մեխանիզմն է, որն օգնում է սովորողներին ինքնուրույն կողմնորոշվելու, վերացնելու խնդիրները և դրանք փոխարինելու օգտակար նախաձեռնություններով:
Ճկունությունն անձի՝ անհրաժեշտության դեպքում, նախապես մշակված ծրագրերից շեղվելու, փոփոխվող իրավիճակներին արագ հարմարվելու և համարժեք արձագանքելու ունակությունն է: Ճկունությունը պահանջում է ընդունել, որ միշտ, անգամ եթե ժամանակի ընթացքում փորձ եք ձեռք բերել, սովորելու շատ բան եք ունենալու: Ճկունությունը կարևոր նշանակություն ունի սովորողի հաջող կարիերայի, մասնագիտական աճի և զարգացման տեսանկյունից:
3.Աշխատանքային խմբերի ձևավորում:
4.Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաշխում

Հիմնախնդրի կարևորությունը համայնքի կամ հանրության համար հիմնավորելու նպատակով դասարանում ձևավորվում են աշխատանքային երեք խմբեր։
1. Յուրաքանչյուր խմբի տրվում է հստակ առաջադրանք։
2.Համատեղ քննարկվում և մշակվում է խմբերի աշխատանքների գնահատման ձևը։
3.Խմբերը պատասխանատու են իրենց առաջադրանքի կատարման համար։
Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի սովորողների հետևյալ հմտությունների ձևավորմանը՝ **մեդիագրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն, տեղեկատվական գրագիտություն, հաղորդակցություն:**
Մեդիագրագիտությունը սովորողի՝ հավաստի և ոչ հավաստի աղբյուրները պարզելու կարողությունն է։ Այն հնարավորություն է տալիս հասկանալու տեղեկատվության հրապարակման մեթոդները և միջոցները։
Տեղեկատվական գրագիտությունը փաստերին, թվերին, վիճակագրությանը և տվյալներին տիրապետելու սովորողի կարողությունն է։ Չափազանց կարևոր է, որ սովորողները կարողանան ինքնուրույն պարզել և տարբերակել ճիշտ և սխալ տեղեկությունները։
Տեխնոլոգիական գրագիտությունը սովորեցնում է օգտվել տեղեկատվական դարաշրջանի սարքավորումներից։ Այն թույլ է տալիս հասկանալ և կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներն ու սարքավորումները։
5.Խմբերի ինքնուրույն աշխատանք, հետազոտություններ
Հետազոտական աշխատանքը կատարելու համար խմբերին տրվում է ժամանակ։ Այդ ժամանակահատվածում կազմակերպվում են յուրաքանչյուր խմբի հետ միջանկյալ քննարկումներ։ Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի հետևյալ հմտությունների ձևավորմանը. **արդյունավետություն, սոցիալական հմտություններ, առաջնորդություն, համագործակցություն, ճկունություն, քննադատական մտածողություն , նախաձեռնողականություն:**
Համագործակցությունը ուրիշների հետ համատեղ աշխատելու ունակությունն է։ Այն ենթադրում է, որ սովորողները պետք է աշխատեն միասին, հասնեն փոխզիջման և խնդրի լուծումից ստանան հնարավորինս լավագույն արդյունքը։ Համագործակցության կարևորագույն բաղադրիչը անձի պատրաստակամությունն է։ Բոլոր մասնակիցները ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է պատրաստակամ լինեն հրաժարվելու իրենց որոշ գաղափարներից և ընդունելու այլ գաղափարներ
Առաջնորդությունը անձի՝ նպատակներ սահմանելու և համագործակցելու միջոցով դրանց հասնելու ունակությունն է։ Այն թիմին շահագրգռելու և ոգևորելու, քայլ առ քայլ դեպի նպատակն առաջնորդելու, թիմային աշխատանքներն արդյունավետորեն կազմակերպելու ունակություն է։
Իրական հաջողության հասնելու համար պահանջվում է նաև **նախաձեռնողականություն**, որը անձի՝ ծրագրեր, ռազմավարություն ինքնուրույն նախաձեռնելու ունակությունն է։ Դա սովորելու և կիրառելու առումով բավականին բարդ հմտություն է, քանի որ հաճախ ենթադրում է լրացուցիչ աշխատանք, ջանքեր ու ժամանակ,
6.Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ
Ուսուցիչը պարբերաբար կազմակերպում է քննարկումներ, հետևում խմբերին հանձնարարված առաջադրանքների կատարման ընթացքին, անդրադառնում աշխատանքի գնահատման պահանջներին, ինչպես նաև նախանշում հետագա աշխատանքի ուղղությունները։ Անչափ կարևոր է ապահովել և աջակցել, որ խմբերում

ներառված բոլոր սովորողներն ունենան իրենց կարողություններին համապատասխան գործառույթներ, հավասար հնարավորություններ և պայմաններ՝ աշխատանքներին մասնակցելու, ընդգրկվելու համար: Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի հետևյալ հմտությունների ձևավորմանը. **հաղորդակցություն, համագործակցություն, արդյունավետություն, նախաձեռնողականություն:**

7.Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում և գնահատում

Բոլոր խմբերն իրենց աշխատանքներն ամբողջացնում և ավարտուն տեսքի են բերում՝ առաջնորդվելով նախապես քննարկված և մշակված գնահատման սանդղակի չափանիշներով, նախապես՝ մինչև ներկայացնելը, միավորել մեկ սահիկաշարում: Յուրաքանչյուր խումբ սահիկաշարում ներկայացնում է իր առաջադրանքը: Սովորողներին և ուսուցիչներին նախապես տրամադրվում է խմբերի աշխատանքների գնահատման սանդղակը: Խմբի անդամները (կամ նրանցից մեկը) հերթականությամբ ներկայացնում են կատարված աշխատանքները:

Յուրաքանչյուր խմբի ելույթից հետո մյուս երկու խմբերը, ուսուցիչները (ներկաները, մասնակիցները) հարցեր են տալիս, և ծավալվում է քննարկում: Քննարկման ընթացքում խմբերը, մասնակիցները առանձնացնում են աշխատանքի հաջողված կողմերը, նշում,թե ինչը կարելի է բարելավել, և ներկայացնում առաջարկներ: Այնուհետև, օգտվելով գնահատման սանդղակից, խմբերը և ուսուցիչները գնահատում են ելութները:

Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի հետևյալ հմտությունների ձևավորմանը. **արդյունավետություն, տեխնոլոգիական գրագիտություն, սոցիալական հմտություններ, համագործակցություն, ստեղծարարություն, հաղորդակցություն, արդյունավետություն, տեխնոլոգիական գրագիտություն;**

8. Գործողությունների ծրագրի առաջարկ

Բոլոր խմբերն իրենց աշխատանքներն ամբողջացնելուց, ավարտուն տեսքի բերելուց և քննարկելուց հետո համատեղ ջանքերով մշակում են հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողությունների առաջարկներ: Առաջարկները պետք է ունենան իրականացման հստակ ժամանակացույց, հանձնարարությունների կատարման դերաբաշխում, պատասխանատուներ, անհրաժեշտ նյութեր և ռեսուրսներ: Առաջարկները տեսանելի և հասանելի պետք է լինեն շահագրգիռ բոլոր կառույցներին, համայնքի բնակիչներին ու հանրությանը:

Օրինակ

- Սոցիալական հոլովակների, տեսանութերի, սահիկաշարի պատրաստում և տեղադրում դպրոցի կայք էջում
- Դասընթացների կազմակերպում սովորողների, համայնքի բնակիչների և խնդրով մտահոգ քաղաքացիների համար:
- Կլոր սեղան քննարկումների նախաձեռնում շահագրգիռ բոլոր կառույցների մասնակցությամբ:
- Միջդպրոցական, համայնքային միջոցառումների, մրցույթների կազմակերպում,
- Բուկլետների, իլյուստրացիոն շարքերի, ուղեցուցների պատրաստում և տարածում դպրոցում, համայնքում, մարզում, բնակիչների շրջանում:
- Սոցհարցումների վերուծություն,
- Ֆլեշմոբների և խաղերի կազմակերպում, տարածում համապատասխան կայքերում:
- Հիմնախնդիրների թեմաներով ցուցահանդեսների կազմակերպում:
- Հիմնախնդիրը ներկայացնող պաստառների և ինտերնետային էջերի ստեղծում:

- Խմբերի հետազոտություններից դուրս բերված առաջարկ պատկան մարմիններին (համայնքապետարան, մարզպետարան)։
- Էքսուրսիայի կազմակերպում

5. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԹՈՒՆՆԵՐԸ

«Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի:

Հասարակագիտություն առարկայի արդիականությունը հիմնվում է ուսուցման երեք բաղադրիչների վրա՝ իմացական, սոցիալական և անձնային բաղադրիչ: Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով մենք կարող ենք հասկանալ ու բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր ներքին պատկերացում: Հասարակական գործընթացների բազմազանությունը, տարբեր երևույթների մասին առկա տարակարծությունները կարևոր նախապայման են սովորողների մոտ քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից: Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև առկա աշխարհայացքային տարբերությունները, ինչի արդյունքում հաճախ փորձում են մարդկանց ապակողմնորոշել, մանիպուլացնել, զրկել ինքնուրույն մտածելու հնարավորությունից: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է, որպեսզի սովորողներն ունենան քննադատական մտածողություն: Վերջինս հնարավորություն է տալիս հասարակական երևույթները դիտարկել տարբեր կողմերից, կշռադատել դրանց դրական և բացասական ասպեկտների մասին և կայացնել հիմնավորված որոշումներ: Հասարակական գործընթացների բազմազանությունը նաև լավ հնարավորություն է ստեղծում դրսևորելու ոչ ստանդարտ մոտեցումներ և դրանով իսկ զարգացնելու սովորողների ստեղծագործական մտածողությունը: Այս առարկայի դասավանդման շրջանակում առաջնային է համարվում քաղաքացիական, իրավական, տնտեսական, մշակութային, մեդիա գրագիտության ձևավորումը, որոնք համարվում են բարեկեցիկ հասարակության հենասյուները:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել սոցիալական հմտությունների մասին և դրանք կիրառել հասարակական տարբեր երևույթներ բացատրելու գործընթացում:

Հասարակությունների զարգացման մակարդակը մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով: Այս առումով կարևոր են անձի հուզական հասունությունը, ինքնաճանաչողության, ինքնագնահատման բարձր հմտությունները: Անձի ձևավորման գործում էական նշանակություն ունեն այնպիսի արժեքներ կրելը, ինչպիսիք են՝ ազատությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, արժանապատվությունը:

Հասարակագիտության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տալիս ընտրել ուսումնական գործունեության տարբեր տեսակներ ելնելով՝ թեմայի բովանդակությունից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից: Դրանք են.

- Ուսումնական նյութի բացատրում
- Ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ
- Աշխատանք տպագիր և էլեկտրոնային սկզբնաղբյուրների հետ՝ գիտական բազային գործիքների օգտագործմամբ (մեջբերումներ, հղումներ, ամփոփումներ, եզրակացություններ, առաջարկություններ)։
- Զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն, աղբյուրների գնահատում և համադրում
- Հիմնախնդիրների հետազոտում,
- Հանդիպումներ
- Մրցույթների անցկացում
- Հաշվետվությունների և էսսեների պատրաստում
- Բանավեճերի կազմակերպում
- ՏՀՏ կիրառմամբ թվային գործիքների օգտագործում
- Դերային խաղեր
- Թղթապանակների պատրաստում, մեկնաբանում
- Անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային, աշխատանքների կատարում
- Անդրադարձ ուսումնական գործունեությանը։

Ուսումնական գործունեության այս բոլոր ձևերը տարբեր չափերով ընդգրկված են նախագծային աշխատանքում:

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով սեփական փորձարարական աշխատանքներից, այլ ուսուցիրների հետազոտական աշխատանքներից, նախագծային աշխատանքի բովանդակության մասին մասնագիտական գրականությունից ստացած արդյունքները հաստատում են առաջ քաշված վարկածը առ այն, որ հասարակագիտության ժամերին նախագծային աշխատանքի անցկացման լայն հնարավորություններ և մեծ արդյունավետություն կա: Այս աշխատանքներում **ուսուցիչը** կատարում է աշակերտի ճանաչողական կարողությունների և հմտությունների զարգացում, ձևավորում ինֆորմացիոն տարածությոն մեջ կողմնորոշվելու հմտության, ընդլայնում սովորողների մտահորիզոնը և ակտիվացնում ուսումնական պրոցեսը, իսկ **սովորողները** ներգրավված են ակտիվ ճանաչողական-ստեղծագործական պրոցեսի մեջ որի ընթացքում նրանք ստանում են նոր գիտելիքներ և ամրապնդում են այդ առարկայից ստացած գիտելիքները նաև լուծում են պրակտիկ, հետազոտական խնդիրներ: Այս ամենի իրականացմանը հնարավորություն է տալիս առարկայի չափորոշիչը;

ԵԶՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասարակագիտություն առարկայի առանձնահատկություններից մեկն այն է, որ առարկան բաղկացած է Սոցիոլոգիա, Հոգեբանություն, Իրավագիտություն, Տնտեսագիտություն, Քաղաքագիտություն, Փիլիսոփայություն գիտակարգերից, ինչը հնարավորություն է տալիս հասարակական երևույթներն ընկալել բազմակողմանիորեն և ինտեգրված եղանակով: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հասարակագիտական հարցերի մասին չկան միանշանակ տեսակետներ, վերջնական լուծումներ, ինչը հնարավորություն է տալիս սովորողների մոտ զարգացնել խնդիրները համակողմանի դիտարկելու, այլակարծությունը հանդուրժելու, հետազոտական և նախագծային մոտեցումները հաջողությամբ կիրառելու հնարավորությունները, վեջինս ենթադրում է ուսումնական գործընթացի այնպիսի մոդելավորում, երբ սովորողները որոշակի տնական ժամանակահատվածում աշխատում են մարդկանց, հասարակությանը հուզող կենսական կարևոր հիմնախնդիրների շուրջ, ձեռնամուխ լինում իրական, արդիական հիմնահարցերի ուսումնասիրության գործին:

Աշակերտները սովորում են հետազոտություններ կատարել, աշխատել մեդիաաղբյուրների, տեքստային, թվային և գրաֆիկական տեղեկույթի հետ, կողմնորոշվել տեղեկատվության «ծովում», հավաքել, վերլուծել և գնահատել հիմնահարցին առնչվող տարաբնույթ տեղեկություններ, կազմակերպում են հարցազրույցներ, հանդիպումներ խնդրով շահագրգիռ տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ:

Ուսումնական նախագծային մեթոդը ստեղծում է ուսումնական այնպիսի միջավայր, որտեղ խրախուսվում և խթանվում են խմբային աշխատանքը և համագործակցությունը:

Հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելիս սովորողները բաժանվում են խմբերի: Ընդհանուր նպատակին հասնելու համար խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ, փոխանակում և վերլուծում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում են քայլեր, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց, կրում անհատական պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար:

Հասարակագիտության ժամերին նախագծային աշխատանքի հաջողությունը կայանում է նրանում , որ այն կապված է իրական կյանքի հետ, և սովորողը գիտակցում է, որ գործ ունի իրական պրոբլեմի հետ, այն սովորողներին տալիս է հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ, լինել ստեղծագործ, նախաձեռնող, նպատակասլաց, ստեղծել բազմաթիվ շփումներ: Այդ իսկ պատճառով, հասարակագիտության ժամերին, նախագծային աշխատանքների խրախուսումն ու կիրառումը խիստ օգտակար և նպատակային է՝ նոր սերնդի կրթման և դաստիարակության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Նախագիծը՝ ուսուցման մեթոդ https://dpir.mskh.am/hy/node/523

2. Ուսուցման նախագծային մեթոդ https://dpir.mskh.am/hy/node/533

3.Ինչ է նախագծային մեթոդը
https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4

4.Կլիմայի փոփոխություն. կրթության կազմակերպում 6-9-րդ դասարաններում

դասավանդող ուսուցիչների համար

https://www.unicef.org/armenia/%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%B6%D5%A5%D6%80/%D5%AF%D5%AC%D5%AB%D5%B4%D5%A1%D5%B5%D5%AB-

5.Колоколова Лариса Климовна
Проектная деятельность на уроках обществознания.
https://studylib.ru/doc/508810/proektnaya-deyatel._nost._-na-urokah-obshhestvoznaniya-trebuet-ot?fbclid=IwAR0g-VWgja1VOA_Q7iVpofAoRHA7_P6IADrmzi_H48mmbEV52CWpsTwEjcY